ՎԱՆԻ 1896 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսերին, երբ արևելահայությունն իր բախտն արդեն կապել էր հյուսիսի հզոր հարևանի՝ Ռուսաստանի հետ, տնտեսական ու մշակութային կյանքի և ֆիզիկական գոյության համար ստեղծել համեմատաբար նպաստավոր պայմաններ, արևմտահայությունը տակավին գտնվում էր Թուրքական լծի տակ։ XIX դ. իր ազատության և անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարը սուր ծայրով ուղղվեց օսմանյան բռնատիրության դեմ և դարավերջ թևակոխեց ազգային-ազատագրական շարժման նոր վերելքով։ Թուրքական հարստահարություններից ծնունդ առած հայ ազատագրական շարժումը բախվեց սուլթանական մոլեգնող ռեակցիային, որն արյան մեջ էր խեղդում աղատատենչ ժողովուրդների բոլոր ընդվզումները։

Հայ ժողովրդի նկատմամբ հնուց ի վեր գոյատևող հալածանքները առավել սաստկացան XIX դ. 90-ական թվականներին։ Արգելվեց եկեղեցական ուրարողությունների ժամանակ հայերի կամ Հայաստանի հետ կապված հարցերի մասին խոսելը, անգամ անուններ տալը։ Գրաքննությունն արգելեց բնակավայրերի հայկական անվանումների օգտագործումը։ Հայ զինվորական բժիշկները հեռացվեցին բանակից, հայ պաշտոնյաները՝ գատական և մյուս մարմիններից։ 1892 թ. սուլթանի հրամանով դադարեցվեց Միացյալ հայոց ընկերության գործունեությունը, իսկ 1893 թ. արգելվեցին Ազգային սահմանադրության մայիսյան տոնախմբությունները, որոնք մինչ այդ մեծ շուքով և խանդավառությամբ կատարվում էին ամենուրեք։ Ըստ էության արգելվեց նաև Ազգային սահմանադրությունն ընդհանրապես։ Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովը, մինչև լրիվ խափանումը (1896), մի քանի կիսատ-պռատ նիստ գումարեց միայն։ Իսկ քիչ ուշ կառավարության որոշմամբ արգելվեց հայերեն գրականության մուտքը Թուրքիա ու միառժամանակ փակվեցին Թուրքիայի բազմաթիվ հայ պարբերականներ։

Բայց առավել սարսափելին, անշուշտ, զանգվածային ջարդերն էին, որ ձեռնարկվեցին ազատագրական շարժումը արյան մեջ խեղդելու, ապա և Հայաստանը հայաթափ անելու անհագ դիտավորությամբ։ Իր ելույթներից մեկում խոսելով համիդյան ջարդերի մասին, Գ. Զոհրապը բացատրում էր. «Ջարդի քաղաքականությունը սիստեմ մըն է՝ հատուկ բոլոր տկար կառավարություններուն», սակայն «պետք է գիտնալ որ հալածանքներուն ամենեն աղետավորները ջարդերը չեն, այլ անոնք, որոնք կուղղվին մտքի և սրտի դեմ։ Եվ այդ տեսակի էին 16-րդ հոդվածին հաստատումեն անմիջապես հետո հայոց դեմ սկսած հալածանքները»[1]։

Դարավերջի հայ ազատագրական շարժման համար ողբերգական էր հատկապես 1893 թ., երբ հայոց հինավուրց աշխարհը, դեռ 1894—1896 թթ.

---

1 Գ. Զ ո հ ր ա պ, Երկերի ժողովածու, հ. 1. Երևան, 1962, էջ VI։

ջարդերի նախօրեին արդեն, դարձավ արյունալի իրադարձությունների թատերաբեմ[2]։ Մեկը մյուսի ետևից զոհվեցին դեռևս 80-ական թվականներից թուրքական բռնապետության դեմ ըմբոստացած բազմաթիվ հայդուկներ ու հասարակական գործիչներ, իսկ թուրքական բանտերը լցվեցին հայ «կասկածելիներով» ու նրանց համախոհներով։ Բանտ էին նետվել այնքան անմեղ մարդիկ, որ թուրքական զնդաններն այլևս հնարավորություն չունեին բոլորին պարփակելու իրենց մեջ և հաճախ իշխանությունները ստիպված էին լինում զորանոցներ տրամադրել այդ նպատակին։

Բայց այս ամենը չվհատեցրեց հայ ազատամարտի աննկուն զինվորներին, որոնք հերոսացան 1894—1896 թթ. Սասունի և Զեյթունի լեռներում և այլուր տված գոտեմարտերում։ Ժողովրդական ինքնապաշտպանության փայլուն օրինակ տվողներից էր նաև Վան-Վասպուրականը։

Սասունի 1894 թ. ապստամբությունից քիչ անց՝ 1895 թ., հռչակված կառավարական ընդհանուր ներման խաբուսիկ անդորրի ներքո, շարունակվում էին երկրի տարբեր մասերում հայերի նկատմամբ սկսված հալածանքներն ու զանգվածային կոտորածները։ 1895 թ. վերջերին, 1896 թ. սկզբներին արդեն Վանի ու նրա շրջակա գավառների մահմեդական ազգաբնակչության մեջ եռուզեռ էր տիրում։ Պարբերաբար հրավիրվող գաղտնի ժողովներում նրանք մանրամասն հրահանգավորվում էին, ապա զինվում՝ սանձազերծելու նահանգի քրիստոնյաների ջարդը։

Տակավին այդ դեպքերից շատ առաջ և տարիներ շարունակ թուրքական իշխանությունները թուրք և քուրդ ժողովուրդներին լարում էին հայերի դեմ, գրգռում նրանց կրոնական մոլեռանդությունը, ահաբեկում հայկական պետականության վերականգման և այդ դեպքում հայերի կողմից ոչ քրիստոնյա ժողովուրդների ստրկացման վտանգի մասին անհեթեթ առասպելներով։ Հետևողականորեն թունավորելով մահմեդական ազգաբնակչության գիտակցությունը, թուրքական իշխանությունները բանուկ ճանապարհ էին հարթում՝ նրանց ձեռքով հայերին բնաջնջելու իրենց արնածարավ ծրագրերը կենսագործելու համար։

Ահա այդ օրերին, արտակարգ լիազորություններով, բարենորոգումների իրագործման անվան տակ, բայց իրականում հայկական կոտորածներ կազմակերպելու նպատակով, Վան ժամանեց Եղզի մեծ մարդասպանի արյունոտ հանձնակատար Սաադեդդին փաշան։ Նա անհապաղ չեզոքացրեց ինչպես ծայրահեղություններից խուսափող կուսակալ Նազիմ փաշային, այնպես էլ նրա օգնական Ստեփան Մելիքյանին, որը նոր էր ստանձնել այդ պաշտոնը։ Քիչ անց, առաջինը Վանի հերոսամարտից մի քանի շաբաթ, իսկ երկրորդը մի քանի ամիս հետո, պիտի շնորհազրկվեին ու հեռացվեին Վանից։

Դեռ Սաադեդդինի ժամանումից առաջ պարբերաբար Վան հասնող համատարած ու ահռելի ջարդերի բոթը քաղաքի հայ ազգաբնակչությանը ստիպեց լրջորեն խորհել մոտալուտ արհավիրքին դիմագրավելու մասին, որը սակայն նրանք կատարեցին ուշացումով և ոչ անթերի։

Վասպուրականի, հատկապես Վանի ու նրա շրջակա հայության ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով դեռ 1895 թ. կեսերին Սալմաստից Վան էին անցել և քաղաքում ու մոտակա գյուղերում գործում էին

---

[2] «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897, ч. II, стр. 91—92.

հայդուկային մի քանի փոքրիկ ջոկատներ, իսկ մի քանիսն էլ ստեղծվել էին տեղերում։ Ավելի ուշ՝ 1895 թ. աշնանը, ճանապարհին ծանր փորձությունների ենթարկվելով և քրդական հրոսակների դեմ տված հարկադրական մարտերով, նույն Սալմաստից Վան անցան զինված նոր խմբեր[3]։

Վան անցավ նաև 1893 թ. Սալմաստի Հավթվան գյուղում ուսուցչի պաշտոն ստանձնած Մ. Ավետիսյանը, որը իր վրա էր վերցրել տեղի արմենականների ղեկավարությունը։ Սալմաստից նա տերտ կապեր էր պահպանում Վասպուրականի հետ[4]։

Պարսկաստանից ժամանած զինյալ խմբերի հետ միասին Վանի ինքնապաշտպանությանը պատրաստվող հայ ազգաբնակչությունն ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ հին ու նոր տիպի հրացան ու ատրճանակ, այդ թվում՝ որսորդական հրացաններ։ Երկարատև պաշարման հետ առնչվող դժվարությունների մասին հայ գործիչները ամենևին չէին մտահոգվել, ուստի ինքնապաշտպանության նախապատրաստական աշխատանքները հեռու էին բավարար լինելուց։

Վանում և շրջակա գյուղերում ցրված պաշտպանական փոքրիկ ջոկատները, որոնցում մեծ մասամբ ընդգրկված էին 8—15 մարդ, ունեին ամեն խմբում մի քանի հրացան միայն։

Մ. Ավետիսյանի ջանքերով զենք ձեռք բերելու համար նախապես կազմակերպված հանգանակության շնորհիվ հնարավոր եղավ զգալի գումար հավաքել։ Սակայն այդ գումարով, բայց անփութորեն խիստ ուշացած (արդեն մայիսի վերջերին) Պարսկաստան զենք գնելու մեկնող երիտասարդները, այդ թվում Գ. Պեռզիկյանը, Ա. Ծկարյանը և ուրիշներ, ճանապարհին ձերբակալվեցին, և դրսից լրացուցիչ զենք ստանալու բոլոր հույսերն ի դերև ելան։

Ավելի լավ բախտ չէր վիճակվել նրանցից երկու օր առաջ նույն նպատակով Սալմաստ ուղևորված Ն. Տեր-Հովհաննիսյանի խմբին, որը Դերիկի վանքի մոտակայքում շրջապատվեց քրդական հրոսակների կողմից և զգալի կորուստներ կրեց[5]։

1896 թ. գարնանը Վանում գրեթե ամեն օր սպանության ու կողոպտի բազմաթիվ դեպքեր էին տեղի ունենում։ Եվ վերջապես հունիսի 2(14)-ի լույս 3(15)-ի գիշերը թուրքական զինվորների և քուրդ մաքսանենգների միջև տեղի ունեցավ շինծու մի ընդհարում, որի մեջ ներքաշեցին և հայերին[6]։

Իշխանությունների կողմից վաղօրոք նրբորեն կազմակերպած այդ որոգայթը ազդանշան ծառայեց սկսելու կանխապես ծրագրված ընդհանուր ջարդը։ Արդեն հունիսի 3(15)-ի և 4(16)-ի ընթացքում հրի ու սրի մատնը-

---

3 «Հեղափոխական ալբոմ», հ. 7, 1969, № 10 (82), էջ 248—254։

4 1895 թ. անցնելով Կովկաս, Մ. Ավետիսյանը անպաշտոն ձևով Պետերբուրգ ուղեկցեց ցարին այցելության գնացող հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանին։

Պետերբուրգում Կ. Եղյանը նրան առաջարկեց մեծահարուստ Ծատուրյանի ընկերակցությամբ մեկնել Անգլիա, հաստատվել Լոնդոնում և զբաղվել Հայկական հարցով՝ այն է մեծ տերությունների դիվանագիտական դռները վերստին բախելու անհրապույր ու անօգուտ տքնությամբ։ Սակայն Մ. Ավետիսյանին չգայթակղեց Կ. Եղյանի գործնական չթվացող այդ առաջարկը։ Նա գերադասեց վերադառնալ Սալմաստ, որտեղից էլ անցավ Վան (ՀՍՍՀ Պետական պատկերասրահ, արխիվային բաժին, Փ. Թերլեմեզյանի ձեռագիր հուշերը)։

5 «Հուշեր Արմենակ Եկարյանի», Գահիրե, 1947, էջ 91։

6 Նույն տեղում։

վեցին ու կողոպտվեցին քաղաքի մի շարք թաղամասեր, հատկապես խառը բնակչություն ունեցող թաղերը։ Ապա հիմնական հարվածն ուղղվեց գրեթե ամբողջապես հայաբնակ Այգեստան թաղամասի դեմ։

Շուտով Վան հասավ Բաղեշի աղետի գույժը։ Վանում հայ բնակչության բնաջնջման նախապատրաստման գործում եռանդուն դեր ստանձնեց և Թալանի ու կոտորածի առաջին հրամանը տվեց Սասունում հայ մանուկների արյամբ փրեն օծած և ամենևին ոչ դիպվածով Վանում պաշտոնի կոչված Այգեստանի զորամասի հրամանատար Հալիմ բեյը։

Սկզբում շփոթված ու խուճապահար հայ ազգաբնակչությունը զգալի կորուստներ տվեց։ Սակայն տագնապալի այդ օրերին մահացու վտանգի առջև պառակտիչ իրենց վեճերը դեն նետած կուսակցություններն ու խմբակցությունները կարողացան պայքարի միացյալ ճակատ ստեղծել հայկական թաղամասերը գրոհող թուրքական զորամասերի, քրդական համիդիական գնդերի, ինչպես նաև իշխանությունների թելադրանքով տոքի ելած մահմեդական ամբոխի դեմ, որին միացել էին գավառներից քաղաք խուժած քուրդ ռազմատենչ հրոսակները։

Այգեստան թաղամասում հրավիրված արտակարգ ժողովում որոշվեց միացյալ ուժերով դիմադրել կառավարական զորքերին ու քուրդ համիդեականներին, և եթե իրենց վիճակված է ընկնել անհավասար այդ մարտում, ապա զոհվել միայն զենքը ձեռքներին[7]։ Որոշվեց նախապես ցուցակագրված հինգ հարյուր երիտասարդներին դիրքավորել հայերի թուրքական թաղամասերին սահմանակից երկհարկանի տների վերին հարկերում, և այդպիսով ստեղծել անառիկ դիրք-պատնեշներ՝ խափանելու դեպի հայկական թաղերը շարժվող կանոնավոր զորամասերի ու թուրք ամբոխի առաջխաղացումը։

Ստեղծվեցին երեսունից ավելի նման դիրքեր, ինչպես նաև հնարավորին չափ ամրացվեց շրջապատը։ Պաշտպանական տարբեր միջոցառումներ ձեռնարկվեցին գրեթե բոլոր բնակարաններում, բակերում և պարտեզներում։ Միմյանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու նպատակով դիրքերի միջև ստեղծված էր ուժեղացված հաղորդակցություն։

Հինգ հարյուրի չափ հրազեն ունեցողներից զատ, թրերով, դանակներով, և ով ինչով կարող էր, զինվել էին կրկնակի թվով այլ կռվողներ, և ամենահանդուն աջակցությունն էին ցույց տալիս մյուսներին[8]։

Ինքնապաշտպանության առաջին շարքերում համարձակ կռվում և անվեհեր տոկունության օրինակ էին ծառայում նաև կանայք։ Հայ մարտիկներից շատերը, հատկապես դիրքապահ չոկատների հրամանատարները և մյուս ղեկավարները, կրում էին հատուկ համազգեստներ և կարմիր խաչերով մորթե գլխարկներ։

Մի շարք թաղամասերում թշնամու հեծելազորի առաջխաղացումը կասեցնելու և ընդհանրապես հարձակվող զորամասերի համար դժվարություններ ստեղծելու նպատակով փտել և ցած էին գցել Այգեստանի փողոցները երիզող հսկա ուռենիները, ինչպես նաև փակել էին առուների հունները և թաղամիջյան բոլոր ճանապարհները ողողել ջրով[9]։

---

7 Հ. Երամյան, Հուշամատյան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 346 և հետո։

8 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերն, Փարիզ, 1947, էջ 71։

9 Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր Նախիջևան, 1915, էջ 40։

1895 թ. մարտին Վասպուրականի հայկական գյուղերը մշտապես ասպատակող քրդական կեղեքիչներից մեկի՝ արյունարբու Շաքիրի դեմ հնչակյան ահաբեկիչները անհաջող մահափորձ էին կատարել։ Հունիսյան չարաղետ օրերին մոլեգնած և վրիժառու այդ ավազակը, իր հորդաների գլուխ անցած, Նորդուզն ու Հայոց Ձորը հրի մատնելով նույնպես ներխուժեց Վան[10]։

Բազմաթիվ հայ ընտանիքների հաջողվեց խույս տալ և պատսպարվել եկեղեցիներում, միսիոներական հաստատություններում, օտարերկրյա հյուպատոսարաններում, իրենց հետ բարիդրացիական հարաբերությունների մեջ գտնվող թուրքերի բնակարաններում։

Սակայն միշտ և ամենուրեք չէր, որ հաջողվում էր այդ միջոցներով փրկել հայ անզեն բնակչության կյանքը։ Նախապես զինված և հրահանգավորված մահմեդական մոլեռանդ ամբոխը, թուրք ծպտյալ զինվորների ու ոստիկանների ուղեկցությամբ և ղեկավարությամբ, հունիսի 5 (17)-ին այրեց Ս. Հակոբի եկեղեցին ու հաշվեհարդար տեսավ այնտեղ պատսպարված հայ ընտանիքների հետ՝ սրի քաշելով համարյա բոլորին։ Մոլեգնած այդ խաժամուժը նույնիսկ փորձեց հարձակվել հայերին ապաստան տված միսիոներական առանձին հիմնարկությունների վրա[11]։

Տակավին Վանի դեպքերի նախօրյակին, իսկ առավել այդ օրերին, Վան սկսեցին լցվել շրջակա գյուղերի թալանված ու սրահալած բնակիչները, իսկ ինքնապաշտպանության օրերին՝ նաև հեռավոր գյուղերի փախստականները։ Հալածական ու անապաստան, լլկված ու կոտորված այս խլյակները, որ ահաբեկված խուժում էին Վան, հիմնականում զառամյալ ծերեր էին, կանայք ու անպաշտպան երեխաներ, որոնց տեղավորումը նոր հոգսերի ու դժվարությունների առջև էին կանգնեցնում սակավաթիվ հայ մարտիկներին։

Այսուհանդերձ, քաղաքի հայ բնակչությունը, հատկապես երիտասարդությունը, զինված թե անզեն, մի քանի օր շարունակ, աներեր մնաց ինքնապաշտպանության կրակային գծում, հերոսաբար մարտնչելով և անձնազոհության հրաշքներ կատարելով այնտեղ։

Ինքնապաշտպանության առաջին փայլուն օրինակ տվողներից մեկը Արշակ Չթչյանն էր, որ Կլոր Դար թաղում գտնվող մարտկոց դարձրած իր բնակարանից, ներսես ժամկոչյանի օգնությամբ, մի ամբողջ օր անվհատ դիմադրում էր հայկական թաղամասեր ներխուժող թշնամուն, իսկ հետո միացավ Արուրք կոչվող թաղի դիրքերում կռվող իր ընկերներին։

Իրենց տներն ու այգիները այդպիսի ամրոցներ էին դարձրել նաև շատ ուրիշները[12]։

Ինքնապաշտպանության առաջին իսկ օրերին Միհրդատ Եսայանի կողմից դիրքերում հորինված «Կռվեք տղերք» երգի ղողանջները, հայրենաշունչ մյուս երգերի հետ, թևածում էին դիրքից դիրք, ոգեշնչում բոլորին[13]։

Դիմադրությունը շարունակվում էր։ Բայց ուժերը խիստ անհավասար էին, և ռազմական պատրաստություն չունեցող ու ստիպված զենք վերցրած

---

10 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 353—354։

11 Լևոն Զորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հ. Բ, Պեյրութ, 1974, էջ 197։

12 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 360։

13 Նույն տեղում։

հայ մարտիկները, զուրկ զինամթերքի ու սննդի անհրաժեշտ պաշարից, որևէ տեղից օգնություն ստանալու ակնկալիք չունենալով, ի վերջո, արյունարամ ընկրկելու էին Թուրքական կանոնավոր զորամասերի ահագնացող հզորության դեմ։

Սակայն Թուրքական իշխանությունների նկատմամբ ունեցած իրավացի անվստահությունը ստիպեց հայկական ինքնապաշտպանության առաջնորդներին կտրականապես մերժելու Վանի օտարերկրյա հյուպատոսների միջոցով Սաադեդդինի կողմից իրենց արված նախնական առաջարկությունը՝ զենքը վայր դնելու և դիմադրության կազմակերպման ղեկավարների Պարսկաստան հեռանալու մասին։

Երկուստեք հրացանաձգությունն առավել սաստկացավ։ Առանձին տեղամասերում հայ աշխարհազորայիններին հաջողվեց ետ շպրտել անողոք հակառակորդին, իսկ հունիսի 7 (19)-ին, մարտերից մեկում անցնելով հակահարձակման, նրանք գնդակների տարափի տակ մոտեցան Թշնամու առաջապահ դիրքերին և խլեցին երկու հրանոթ։ Սակայն Վանի անգլիական հյուպատոս Ուլյամսի խորհրդով, որին, ականատեսների վկայությամբ, մինչ այդ հաջողվել էր Թուրքական ֆեսով շրջել կրակի առաջավոր գծում և լրտեսել հայկական դիրքերը, նոր մարտագիծ տեղափոխված Թուրքական հրետանին կարողացավ դիպուկ նշանառությամբ շարքից հանել այդ դիրքերից մի քանիսը։

Սրանից հետո միայն Ուլյամսին հաջողվեց համոզել Վանի Թեմական առաջնորդ Սահակ վարդապետին, ապա նրա օգնությամբ ինքնապաշտպանության ղեկավարներին՝ զենքը վայր դնել։

Անգլիական դիվանագիտությունը, հանձին Ուլյամսի, արտակարգ շահագրգռվածություն էր հանդես բերում հապշտապ կանխելու Ռուսաստանին սահմանակից Վան-Վասպուրականում բռնկվող նման միջադեպերը։ Եվ դա առավել ևս 90-ական թվականներին, երբ Թուրքիայի կառավարող շրջաններում խախտվել էին Անգլիայի նախկին դիրքերը։ Սակայն անգլիական դիվանագիտությունը մտադիր չէր այդքան դյուրին կերպով հաշտվել նման կորստի հետ և տենդով գործում էր հօգուտ ռուս-Թուրքական հարաբերությունների վատթարացման։ Բնավ պատահական չէր, որ 1896 թ. սկզբներին Թուրքիայի արևելյան նահանգներում պաշտոնավարող անգլիական բոլոր հյուպատոսները ետ կանչվեցին և փոխարինվեցին նորերով։ Սրանք իրենց նստավայրերը ժամանեցին՝ ունենալով հայկական հուզումները կասեցնելու, դրանով իսկ Ռուսաստանի միջամտությունն ու ազդեցությունը Թուրքիայի արևելյան շրջաններում կանխելու կտրուկ հրահանգ[14]։ Քաղաքական այդ հեղաբեկման ընդհանուր ֆոնի վրա Ուլյամսին անշուշտ վախ էր ներշնչում առավել այն իրողությունը, որ Վանի դեպքերից ընդամենը երկու օր առաջ աճապարանքով Կովկաս էր մեկնել ռուսական փոխ-հյուպատոս Վ. Մաևսկին։ Արդ՝ երկյուղելով Վասպուրականի հետ անմիջական սահման ունեցող Ռուսաստանի զինված միջամտությունից և նույն նշանակետից պղտորելով հայ գործիչներին համակած այդ օրերի հոգեկան խռովքը, հնարավոր է անգամ ահաբեկելով նրանց, որ իբր Ռուսաստանի դեպի հարավ առաջխաղացմամբ հօդս

---

14 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԱՔԱ), ֆ. «Քաղարխիվ», 1903, գ. 1013, թ. 503։

կցնդեն հայ ժողովրդի ազատաբաղձ ձգտումները[15], անգլիական հյուպատոսը խիստ մտահոգ էր Վանում բորբոքված ռազմական գործողությունների շուտափույթ ավարտով։ Նա ջանում էր ժամ առաջ դադարեցնել տալ թեժ այդ մարտը, թեկուզ Վանի հայ ազգաբնակչության արյան գնով։

Կրքոտ վեճերից ու հապճեպ գումարված խորհրդակցություններից հետո, հստակ պատկերացնելով ստեղծված իրադրությունը, զենքի, ռազմամթերքի և սննդի պաշարների սպառման վտանգը, ինքնապաշտպանության ղեկավարները որոշեցին ընդունել Սաադեդդինի պայմանները՝ դիմադրությունը դադարեցնելու և պաշտպանության կազմակերպիչների Պարսկաստան հեռանալու մասին։ Թուրքական կողմը խոստանում էր չհետապնդել հեռացողներին և երաշխավորում նրանց ապահով նահանջը մինչև պարսից սահմանը։

Հունիսի 8(20)-ի ընթացքում մեկուկես հազարից ավելի հոծ մի բազմություն, զինված ու անզեն, դուրս եկավ քաղաքից ու շարժվեց դեպի Վարագա լեռը։ Բայց այստեղ արտակարգ դժվարին կացության առջև կանգնած դիմադրության ղեկավարները փորձեցին համոզել անզեն բնակիչներին՝ վերադառնալ Վան։ Սակայն մի մասը միայն համակերպվեց այդ որոշման հետ, իսկ մյուսները անխոհեմաբար հետևեցին Պարսկաստան շարժվող խմբերին, որը և ճակատագրական եղավ նրանց համար։

Նենգամիտ Սաադեդդինը անարգաբար խաբել էր հայ գործիչներին։ Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ Բաշկալե-Աղբակ ուղղությամբ շարժվող արմենականների խումբը և նրանց միացած անզեն բնակչության զանգվածը՝ ավելի քան վեց-յոթ հարյուր մարդ, Ս. Բարդուղիմեոսի վանքի մոտ շրջապատվեց Սաադեդդինի ուղարկած թուրքական զորաբանակի ու քրդական ջոկատների կողմից։ Տեղի ունեցած արյունոտ ու անհավասար մարտում նրանց մեծագույն մասը զոհվեց։ Երեսուն-երեսունհինգ մարդու միայն հաջողվեց խույս տալ հետապնդումից և մի կերպ անցնել Պարսկաստան[16]։ Իսկ Մարտիկի և Պետոյի ղեկավարած շուրջ տասուն հոգուց կազմված խումբը, մեկ շաբաթի չափ Վարագա լեռներում պատսպարվելուց հետո, փորձեց նահանջել դեպի պարսից սահմանը, սակայն այս խումբը նույնպես ճանապարհին անակնկալի բերվեց քրդական ջոկատների կողմից, պաշարվեց ու ահեղ կռվում բոլորը նահատակվեցին։

Ինքնապաշտպանության մարտիկների քաղաքից հեռանալուց անմիջապես հետո թուրքական զինվորները, քրդական հրոսակներն ու մահմեդական մոլագար ամբոխը Հալիմ փաշայի առաջնորդությամբ ուխտադրժորեն խուժեց հայկական թաղամասերը, թալանի և ավերի մատնեց, հրդեհեց ամեն ինչ, սրի քաշեց բազմաթիվ անզեն ու անմեղ մարդկանց։ Մոլեգնած բարբարոսները պատսպարաններից հանում և տեղն ու տեղը սրախողխող էին անում անօգնական երեխաներին, կանանց ու անպաշտպան ծերունիներին։ Հայկավանք թաղի հարյուրի չափ ընտանիքներ, որոնք պատսպարվել էին քաղաքապետ Ղալիպ փաշայի տանը, դուրս բերվեցին իրենց թաքստոցներից ու մինչև վերջին մարդը խողխողվեցին։ Միայն չերքեզ զորահրամանատար էմին բեյին հաջող-

---

15 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1900, գ. 710։

16 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 163, էջ 1—2։

վեց կանխել Վանի Քաղաքամեջ կոչվող կենտրոնական մասում ջարդի մեծ չափերով ծավալումը[17]։

Հրդեհ ճարակ դարձան Հայկավանքի, Ս. Հակոբի, Հանկոյանների եկեղեցիները իրենց կից շինություններով, վարժարաններով և Այդեստանի մեծագույն մասը։ Այրվեց նաև այն տունը, ուր ծնվել և իր մանկությունն էր անցկացրել Մ. Խրիմյանը։

Թեպետ Վանը զգալի կորուստներ տվեց, բայց ժողովրդական ինքնապաշտպանությունը թուրքական իշխանություններին հնարավորություն չընձեռեց իրագործելու քաղաքի հայ ազգաբնակչությանը բնաջնջելու իրենց հրեշավոր ծրագիրը։ Մեկ շաբաթ տևած հերոսամարտից հետո բուն քաղաքում զոհերի թիվը հասավ շուրջ չորս-հինգ հարյուրի, որոնցից շատերն ընկել էին տակավին դիմադրության կազմակերպումից առաջ, իսկ մի զգալի մասը՝ պինված երիտասարդության հեռանալուց հետո կատարված տմարդի հաշվեհարդարի ժամանակ։ Սրանց գերակշիռ մասն էլ անօգնական ծերեր, անկողնուն գամված հիվանդներ, կանայք ու երեխաներ էին։

Առավել խոշոր էին Վասպուրականի գյուղական ազգաբնակչության կրած կորուստները՝ շուրջ 20 հազար մարդ։ Գյուղական բնակչության որոշ մասին միայն հաջողվեց պատսպարվել Վարագա լեռներում, Նարեկի վանքում, Աղթամար, Լիմ, Կտուց կղզիներում և այլուր[18]։ Սարսափելի էր մանավանդ պատմական Քաջբերունիքի՝ Արճեշի զանգվածային կոտորածը, որը ղեկավարում էին համիդեական գնդերի քուրդ հրոսակապետերը և որոնց անմիջական հրամաններով մի քանի գյուղերում հայ բնակիչներին կենդանի-կենդանի թաղեցին ցորենի հսկա հորերում։ Արճեշի միայն վեց գյուղերի 580 ընտանիքներից փրկվեցին սոսկ 39-ը[19], իսկ հայ ազգաբնակչության ունեցվածքն ու հողակտորներն անմիջապես ու ամբողջությամբ անցնում էին հարևան մահմեդականներին։ Այս ամենը սուլթանական կառավարության վարած հայաջինջ քաղաքականության հետևողական ու հանգամանալի կենսագործումն էր։ Ահավոր ջարդեր կազմակերպվեցին նաև Հայոց ձորում, Գավաշում, Կարճկանում և այլուր։ Կողոպտվեցին ու հրկիզվեցին Վասպուրականի համարյա բոլոր նշանավոր վանքերը։

Գավառներում եղան դեպքեր, երբ թուրք կամ քուրդ ավագանու առանձին ներկայացուցիչներ փորձեցին իրենց հովանու տակ առնել և պատսպարել հայ անզեն ազգաբնակչությանը։ Նշանակալի է հատկապես Մոկս գավառի փրկումը ահռելի աղետից, որտեղ կալվածական ինչ-ինչ իրավունքներով իշխող Մուրթուլլա բեյը այնուամենայնիվ թույլ չտվեց կոտորած կազմակերպել «իրեն պատկանող» տիրույթում, և Մոկսը համարյա զերծ մնաց ջարդերից[20]։ Նույն ձևով փրկվեց նաև Բերկրին։ Սակայն հիմնական պատճառը, որ Վասպուրականի աղետը խլեց քսան հազար և ոչ թե մի քանի անգամ ավելի զոհ, հարկավ, ինքնապաշտպանության կազմակերպումն էր, որի շնորհիվ մի քանի շրջաններ, առաջին հերթին Շատախի զինված դիմադրություն ցույց տված գյուղերը նույնպես, փրկվեցին կոտորածից։

---

17 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 368։

18 Նույն տեղում, էջ 372—373, Ա-դ ո, Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 316։

19 ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1898, գ. 1584։

20 «Геноцид армян в Османской империи», Ереван, 1966, стр. 105—106.

Նահանգի հայ բնակիչներից շատ-շատերը այդ օրերին և դրանից հետո բռնի կրոնափոխվում էին[21]։ Սկսվեց նաև թալանված ու վշտաբեկ բազմությունների խելակորույս արտագաղթը դեպի հարևան երկրներ՝ Ռուսաստան, Պարսկաստան և այլուր։

1896 թ. սեպտեմբերին մի քանի հայկական զինված խմբեր Պարսկաստանից անցնելով Վան, փորձեցին նորից զինված դիմադրություն կազմակերպել թուրքերի դեմ։ Սակայն նրանց փորձը անհաջող անցավ և նրանք կրկին անցան Պարսկաստան։ Այս վերջին միջադեպը Վասպուրականի տարեգրության մեջ մտավ «փոքր դեպք» անունով, ի տարբերություն հունիսյան իրադարձության, որ կոչվեց «Վանի մեծ դեպք»։

Վանի ինքնապաշտպանությունը, Սասունի ու Զեյթունի հերոսամարտերի շարքում, սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հերոսական դրվագներից է, ժողովրդական զանգվածների խրոխտ ընդվզումը, բռնակալներին նետած նրա բմբոսա մարտահրավերը։

ВАНСКАЯ САМООБОРОНА 1896 Г.

РАФИК ОГАНЕСЯН

Резюме

В национально-освободительном движении западных армян в период 90-х годов XIX в. значительное место занимает Ванская героическая самооборона 1896 г.

С помощью гайдукских отрядов, действовавших в окрестностях Вана и вооруженных групп армян, прибывших из Персии, население Вана смогло организовать защиту города.

Если в дни июньских событий 1896 г. в Ване-Васпуракане жертвы армян не превысили 20 000 человек, то это лишь благодаря самообороне, которую организовали армяне Вана и ряда сельских районов, в частности, Шатаха.

Наряду с героической борьбой Сасуна и Зейтуна против султанской тирании Ванская самооборона является одной из ярких страниц освободительного движения армянского народа.

---

21 Նույն տեղում։